ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1963 Общественные науки

Ս. Բալասյան

ՀԱՅ ԱՍՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ XII—XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Կիլիկիայի հայկական պետությունը իր կազմավորման օրից մինչև կործանումը (1080—1375) մշտապես գտնվում էր միջազգային բարդ իրադրության մեջ, որը հետևանք էր այն բանի, որ Կիլիկիան շրջապատված էր բազմաթիվ թշնամաբար տրամադրված պետություններով, որոնք, սկսած XII դարից, հաճախ ներխուժում էին նրա տերիտորիան և սպառնում նրա գոյությանը: Հատկապես ճակատագրական էին Եգիպտոսի մամլուկների հաճախակի և պարբերական ներխուժումները, որոնք XIII դ. երկրորդ կեսից շարունակվեցին մինչև XIV դարի վերջին քառորդը և վերջնականապես կործանեցին Կիլիկիայի թագավորությունը: Այդպիսի միջազգային դրության մեջ, Կիլիկիայի պետության մշտական ապահովության խիստ անհրաժեշտ գործոններից մեկը կանոնավոր, մշտական և ուժեղ բանակի առկայությունն էր, նրա ռազմական տեխնիկայի ու մարտունակության բարձրացումը, որի թվական կազմը մեծ չափով ավելանում էր պատերազմի ժամանակ: Մշտական բանակ են պահել նաև Կիլիկիայի իշխաններն ու հատկապես սահմանամերձ շրջանների բերդատերերն ու սահմանապահ իշխանները:

Ինչպես հայտնի է, Բյուզանդիան 11-րդ դ. հայ թագավորներին ու ֆեոդալներին տեղափոխում էր Կապադովկիա, Սիրիա և Կիլիկիա՝ իրենց ռազմական ուժերով հանդերձ, հանձնելով նրանց վերոհիշյալ բյուզանդական պրովինցիաների սահմանամերձ բերդերի և ամրոցների պաշտպանությունը, նվիրելով նրանց ընդարձակ կալվածներ, դնելով նրանց վասալական կախման մեջ[1]:

Հետագայում, երբ Կապադովկիան և Սիրիան նվաճվեցին թուրք սելջուկների կողմից, այդ վայրերի հայ իշխաններն իրենց զորքերով փոխադրվեցին Կիլիկիա, որտեղ նույնպես ստանձնեցին սահմանային բերդերի պաշտպանությունը[2]: 11—12-րդ դարերում Կիլիկիայում Ռուբինյան իշխանության և ապա թագավորության ստեղծումից հետո վերոհիշյալ հայ իշխանների զորքերը մտան թագավորական բանակը և կազմեցին «հայոց հեծյալ»-ը, որը պահպանելով բուն Հայաստանի հայոց հեծյալի տրադիցիաները, նոր իրադրության մեջ կրեց որոշ փոփոխություններ, որոնցից հատկապես նշանակալից էր, արևմտաեվրոպական ազդեցության տակ հանդես եկած հայ ասպետությունը, որը, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայում և խաչակրաց պետություններ-

---

[1] Տե՛ս «Ժամանակագրութիւն Միքայելի Ասորւոյ պատրիարքին», Երուսաղեմ, 1871, էջ 198, հմմտ. Chronique Michel le Syrien. Paris, 1905, p. 133. տես նաև «Լումայ», 1899, էջ 69: Տե՛ս նաև A. H. Sayce, Les Hittites, Histoire d'un empire oublié. Paris, 1891, p. 250.

[2] «Մատթէոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 151, 213.

բում հանդես եկած ասպետության, ուներ բոլորովին այլ առաքելություն։ Նրա հիմնական նպատակն էր, ոչ թե ուրիշի երկրների զավթումը, ինչպես այդ տեսնում ենք ասպետական հոգևոր օրդենների մոտ, այլ Կիլիկիայում ստեղծված հայ պետության և նրա բնակչության ֆիզիկական գոյության և ունեցվածքի պաշտպանությունը։

Նախքան բուն ասպետության հարցին անցնելը, մենք նպատակահարմար ենք գտնում որոշ չափով անդրադառնալ Կիլիկյան հայկական պետության բանակի, հատկապես նրա կորիզը կազմող հայոց հեծյալի հարցին, ապա ցույց տալ հայ ասպետների տեղը, դերն ու նշանակությունը այդ բանակում, նրա նմանություններն ու տարբերությունները արևմտաեվրոպական ասպետությունից։

Այսպես, բուն Հայաստանի հայոց հեծյալի նմանությամբ բանակի գլխավոր հրամանատարն էր սպարապետը[3], որը Կիլիկիայում արևմտաեվրոպական տերմինով կոչվում էր գունդստաբլ[4]։ Նրա օգնականներն էին մարաջախտը կամ մարեշալը[5], որն ինտենդանտական գործն էր գլխավորում, և սպասալարը՝ հեծյալ ջոկատների հրամանատարը[6]։

Ինչպես բուն Հայաստանում՝ Արշակունիների[7] և Բագրատունիների[8] ժամանակ, այնպես էլ Կիլիկիայում, մշտական բանակի կորիզը՝ «հայոց հեծյալը» կազմված էր ազատներից, որոնք Կիլիկիայում կոչվում էին ձիավորներ։ Այս մասին ուղղակի մատնացույց է անում Սմբատը գրելով. «Ապա սոյն ամի չէ (1256) յամսեանն հոկտեմբերի աշխարհաժողով արարեալ թագաւորն Հեթում հանդերձ հարազատօք իւրովք, և համօրեն, ազգայնօք և ազատօք, որ և ասէին, թէ ժողովեցան իբրև ԺԲ բիւրս»[9]։ Նույն հեղինակը իր «Դատաստանագրքում» գրում էր. «և զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն և իրենց տեսովն, նոյնպէս և զազատքն՝ որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն... և այլ ցած հեծելւորքն այլ վերցածքն, որ ազատ կոչին»[10]։

Օրդենները, որոնցից միայն հյուրընկալները կամ հիվանդախնամները, որպես թագավորի վասալներ, «տային ամէն տարի հեծել ի ծառայութիւն 400 մարդ...»[11]։

Արքունական և իշխանական ազատազունդ հեծյալ բանակից բացի, պատերազմի ժամանակ հավաքագրվում էր. «աշխարհաժողով ռամիկ քաղաքաց

---

3 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 235, 238, 247։ Հմմտ. «Սմբատայ Սպարապետի պատմութիւն», Փարիզ, 1856, էջ 110։ Մատենադարանի ձեռագիր № 4243, էջ 222։

4 Ներսես Լամբրոնացի, Թուղթ առ Լևոն, 1863, Վենետիկ (Գրիգոր կաթողիկոսի Տղա կոչելոյ նամականի), էջ 239—240։ Recueil des historiens des Croisades. Documents Armeniens. Tome III, p. 606.

5 Ղևոնդ Ալիշան, Սիսուան, 1383, ի Վենետիկ, էջ 475։ Տե՛ս նաև Սամուէլ Անեցւոյ՝ Պատմութիւն, էջ 209—210։

6 «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչելոյ նամականի», 1865, Վենետիկ, էջ 240։

7 Ակադեմիկոս Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1952, էջ 112—119։

8 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն, էջ 356։ Ա. Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 56։ Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 185, Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 75։

9 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 231։

10 Смбат Спарапет, Судебник. Перевод с древнеармянского А. Галстяна, Ереван, 1958, стр. 82.

11 «Սմբատ Սպարապետի պատմութիւն», 1856, էջ 109։

և գեղջկանց»[12], կամ թե «ռամիկ հետևակք»[13]։ Աշխարհաժողովները կազմվում էին հատկապես այն ժամանակ, երբ արտաքին վտանգը դառնում էր սպառնալից։ Նրա մեջ մտնող հետևակ զորքը կազմվում էր ռամիկներից, քաղաքային արհեստավոր դասից և գեղջուկ-շինականներից։

Կիլիկյան Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանները ոչ միայն ստիպում էին զենքի տակ պահել հսկայական ռազմական ուժեր (որոնց թիվը պատերազմի ժամանակ տատանվում էր 80.000—100.000)[14], այլև կատարելագործել ռազմական տեխնիկան, կառուցել բերդեր և ամրոցներ[15], պատրաստել և վարժեցնել ձիավորներ, աղեղնավորներ, չարխողներ, սակրավորներ»[16] և հատուկ անձնակազմ, որոնցից հայտնի են զինվորական բժիշկները[17] և բեռնակիրները[18] բանակին մատակարարող տրանսպորտի անձնակազմը։

Սակայն բանակի հիմնական կորիզը «հայոց հեծյալն» էր, որը, ինչպես ասացինք, կազմված էր հեծելվորներից կամ ձիավորներից։

Ինչպես վերևում տեսանք, ձիավոր և հեծելվոր տերմինները, գործ էր ածվել Կիլիկիայի հայոց հեծյալում ծառայող ազատների համար[19]։

Հայկազյան Նոր բառարանում ձիավոր բառի նշանակությունը տրված է այսպես. «ձիավոր որ ունի զնախապետություն ինչի զինվորական կարգի որպիսին են ազատ և մեծազգի զինվորքն որքն աստիճանաւ ելանեն ի զանազան կարգս»[20]։

Բացի ձիավոր կամ հեծելվոր տերմիններից Կիլիկիայում ազատների դասին պատկանող ձիավորները կոչվել են նաև ձիավարժներ[21], իսկ օտար աղբյուրներում՝ chevalier բառով, որը ասպետի համազոր ֆրանսիական տերմին է[22]։

Խաչակիր ասպետների օրինակով սահմանվել է ձիավորի աստիճան, որին հասնելու համար զինվորականը պետք է հրապարակայնորեն քննություն հանձներ ձիավարժությունից՝ նիզակի գործածությունից, նետաձգությունից և ասպետ դառնալու համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներից և ունակություններից և ապա հատուկ ձիավարեցման ծիսակատարությունից հետո ստանում էր ձիավորի, ձիավարժի կամ ասպետի կոչում։

Նոր Հայկազյան բառարանում և Աճառյանի Արմատական բառարանում «ասպետ» բառին վերագրված է իտալերեն «կավալեր», իսկ հայերեն՝ «ձիավոր ազնվական», «հեծյալ իշխանավոր» նշանակությունը[23]։ Էդ. Դյուլորիեն ասպետ բառը դնում է Oasp, ձի իրանական փոխառությունից[24]։ Ակադ. Հ. Մա-

12 «Հանդէս Ամսօրեայ», 1954, № 1, էջ 68։
13 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 234, 245։
14 Նույն տեղում, էջ 231, Վենետիկ։ Documents Armeniens, T. I, p. 661.
15 Смбат Спарапет, Судебник, стр. 14.
16 Documents Armeniens, T. I, p. 661.
17 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 243։
18 Նույն տեղում, էջ 239։
19 Смбат Спарапет, Судебник, стр. 82–83.
20 Հայկազյան Նոր Բառգիրք։
21 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 441։
22 Dulaurier Ed., Journal Asiatique, 1861, № 18, p. 291.
23 Հ. Աճառյան, Հայ արմատական բառարան, հ. 1, էջ 557—558։
24 Ed. Dulaurier, Journal Asiatique, 1861, № 8, p. 291.

նանդյանը բավարարվում է նիկ. Ադոնցի այն բացատրությամբ, որ «ասպետը» Բագրատունիների տոհմային տիտղոսն է, նշանակում է «տոհմապետ» և համապատասխանում է իրանական visapati բառին։ «Թեև,—ավելացնում է Հ. Մանանդյանը,—Ն. Ադոնցի այս ստուգաբանությունը կարոտ է ավելի հիմնավոր լուսաբանման, սակայն այս մեկնությունն ըստ իս հավանական է, որովհետև նոր այս բացատրությամբ միանգամայն հասկանալի է դառնում ասպետի» գործածությունն իբրև տիտղոս Բագրատունիների միայն տոհմում»[25]։ Նույն տեղում ակադ. Հ. Մանանդյանը դրվատելով Հյուբշմանի և Աճառյանի ստուգաբանությունը, գրում է. «Անհասկանալի է նույնպես, թե ինչու ասպետը ունենալով ֆեոդալական chevalier կամ рыцарь բառի նշանակությունը, գործածական չի եղել Հայաստանում իբրև տերմին «ձիավոր ազնվական»-ների համար»[26]։

Որ ձիավոր և ձիավարժ տերմինները նույն ասպետի հոմանիշներն են, այդ մասին վկայում են նաև մատենագրական այլ աղբյուրներ։ Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը», որը լույս է տեսել 1956 թվականին, խաչակիր ասպետներին հավասար կերպով և ասպետի իմաստով օգտագործում է ձիավորներ[27] տերմինը։ «Ձիավարժը» ասպետի իմաստով օգտագործել է նաև Մատթեոս Ուռհայեցին[28]։

14-րդ դարի հեղինակ Յովհան Դարդելը, որը գրել է Կիլիկյան հայկական պետության վերջին շրջանի պատմությունը, ձիաւոր և ասպետ տերմինները օգտագործել է որպես համազոր և հոմանիշ բառեր[29]։ Այսպես, իր «Ժամանակագրության» 43-րդ գլխի վերնագրում գրում է. «Յաղագս Կոստանդնի որ հրամայեաց երկու ձիաւորաց, որպեսզի խեղդեն վերոհիշյալ տիկինն և երկու որդիները և ինչպես անոնք հրաշքով ազատելու մասին»[30]։

Ինչպես տեսնում ենք, վերնագրում գրված է «երկու ձիաւորաց», իսկ կոնտեքստում «երկու ձիավոր» բառերի տեղ օգտագործում է ասպետ բառը, գրելով. «ետ հրաման ասպետաց երկուց (իսկ ֆրանսերեն օրինակում (deux chevalier) ազատեց ջրահեղձոյց առնեն զտիկինն զայն և զորգիս նորա երկոսին գաղտնաբար»[31]։ Այնուհետև «Ժամանակագրության» բազմաթիվ գլուխներում, «chevalier» տերմինը օգտագործում է հայ ձիավորների մասին խոսելիս, իսկ հայերեն թարգմանությունում «chevalier»-ն իրավացիորեն թարգմանված է ասպետ բառով[32]։ Սմբատ սպարապետի Տարեգրքում օգտագործված «ձիաւորեցուցանել»[33] տերմինի փոխարեն և նույն նշանակությամբ օգտագործում է «արարեալ զնա ասպետ»[34] արտահայտությունը։ Թիկուզ միայն «ձիաւորացուցանել» տերմինի «ասպետ արարեալ» նշանակության օգ-

25 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 63։

26 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 63։

27 «Սմբատ սպարապետի Տարեգիրք», 1956, էջ 148։

28 «Մատթեոսի Ուռհայեցւոյ Ժամանակագրութիւն», էջ 255, 337, 339։

29 «Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց», 1891, Ս. Պետերբուրգ, էջեր 50—51, 54, 69, 107։

30 Նույն տեղում, էջ 54։

31 «Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց», 1891, Ս. Պետերբուրգ, էջ 54։

32 Նույն տեղում, էջ 50—51, 54, 69, 107, 115։

33 «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», էջ 231, 244։

34 «Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն», էջ 115։

տագործումը, մեզ իրավունք է տալիս ասելու, որ եթե ոչ Հայաստանում, գեթ Կիլիկիայում «ձիավոր և ասպետ» տերմինները ունեցել են նույն նշանակությունը, ընդ որում ձիավոր տերմինն օգտագործվել է ասպետի իմաստով և ընդհակառակը։ Այսպիսով, Կիլիկիայի ասպետները որպես ազատանիին պատկանող դաս, կոչվել են ձիավոր կամ հեծելվոր տերմիններով, որոնք նման էին հին Հռոմի ordo equester կոչված ձիավոր դասին կամ միջնադարյան Եվրոպայի՝ գերմանական ritter, ռուսական рыцарь և ֆրանսիական chevalier դասերին։

Ասպետությունը միջնադարյան Եվրոպայում հանդես էր եկել երեք ասպեկտով։

ա) ֆեոդալական հողատիրության մի ձև, որպես ֆեոդալական մանր հողատիրություն, բ) անձնական արժանիք կամ հատկություն, գ) վարվելաձևերի մի կոմպլեքս, սիստեմ»։

«Ասպետության ծագումն ու զարգացումը,—գրում է Հ. Ս. Ստաբլը,—մի հարց է, որը դեռևս խորապես լուսաբանված չէ։ Թեպետև Ժ. Հ. Ռաունդը մեծ ջանքեր է թափել նրա ծագումը բացատրել Անգլիայի ֆեոդալական հասարակարգի առանձնահատկությամբ, սակայն նրա ծագումը միջնադարյան ֆեոդալական Եվրոպայի մասշտաբով մնում է մութ և չլուսաբանված։ Ասպետը ծագել է հեծելվոր, հեծյալ, ձիավոր բառերից»[36] եզրակացնում է Ստաբլը։ Ֆրանսիացի հետազոտող Դյուկանժը երեք դասերի է բաժանում միջնադարյան ֆեոդալական Ֆրանսիայի և Իսպանիայի հասարակությունը. Ա. բարոններ, Բ. ասպետներ, Գ. սեյիսներ կամ ձիավարժներ, գունդստաբլներ և մարշալներ։ Վերջիններս ռազմական առաջնորդներ և խոշոր հողատերեր էին, իսկ ասպետները միջին և մանր հողատերեր[37]։

Ֆ. Էնգելսը ասպետներին դասում է ստորին ազնվականության շարքը, նշելով, որ նրանք ազատ էին հարկերից, բայց մասնակցություն ունեին դրանց վայելելու մեջ։ Միաժամանակ նա ընդգծում է ասպետական հեծելազորի նշանակությունը. «Որպես մանր հողատիրություն, ասպետությունը արագ կերպով կործանվում էր»,—գրում է Էնգելսը[38]։

Կիլիկիայում ձիավորները՝ ասպետները պատկանում էին ազնվականության՝ ազատների դասին[39]։ Նրանց հիմնական մասը մանր և միջին հողատերեր էին, որոնք իրենց սոցիալ-տնտեսական վիճակով գրավում էին ֆեոդալական հիերարխիայի չորրորդ աստիճանը՝ թագավորից, մեծ իշխան-բերդատերերից և իշխան-բարոններից հետո։ Ձիավորների սոցիալ-իրավական վիճակի հիմքում ընկած էր Կիլիկիայի ֆեոդալական հասարակության իշխող դասակարգի սոցիալ-իրավական վիճակն արտահայտող «իմ վասալի վասալը՝ իմ վասալը չէ» սկզբունքը։ Այդ մասին Սմբատը գրում է. «Եւ զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւրն և իրենց տեսովն. նոյնպէս և զազատքն

---

[35] Encyclopedia Britanica, London, 1946, Edition, Tome 6, p. 778.

[36] Նույն տեղում, էջ 779։

[37] Encyclopedia Britanica, 1946, Tome 6, p. 779.

[38] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 31—32։

[39] Смбат Спарапет, Судебник, стр. 48, 82.

որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերը՝ նա իրենցովն զիրենք դատեն՝ իշխանաց իշխանքն, զթագաւորին ճորտերն թագաւորի հրամանաւքն»[40]։

Ինչպես տեսնում ենք, ձիավորները ենթարկվում էին իրենց սենյոր իշխանաց իշխանին կամ իշխաններին և դատվում էին նրանց կողմից։ Իրենց հերթին ձիավորները՝ ցած հեծելվորները, որոնք նույնպես աղատ էին կոչվում[41], դատում էին իրենց ճորտերին, բայց նրանք իրավունք չունեին մահվան դատավճիռ կայացնելու իրենց ճորտերի նկատմամբ, որովհետև այդ իրավունքը պատկանում էր թագավորին և իշխանաց իշխանին։ «...Ապա զնդանել և ծեծել և տուգանել և հանել, վարել յիրենց տեղոյ ի բաց՝ կարեն այնել»[42]։ Այս դեպքում խոսքը վերաբերում է ճորտ գյուղացիներին, որոնք պատկանելիս են եղել ձիավորներին։ Սակայն օրենքը սահմանափակում է նրանց իրավունքը, ընդ որում նրանք չէին կարող իրենց ճորտերին «հայրենէ փթել առանց պարոնին»[43]։

Վերոհիշյալից պարզ երևում է, որ ձիավորները հանդիսացել են առավել խոշոր իշխանների լիճ ճորտերը, երկրակալները, այսինքն մանր ֆեոդալ հողատերերը, որոնք ունեցել են ճորտ գյուղացիներ։

Ինչպես ասացինք, Կիլիկիայի հայկական պետության բանակի կորիզը հանդիսացող հայոց հեծյալը հիմնականում ստեղծված էր և պահպանում էր բուն Հայաստանի Արշակունյաց և Բագրատունյաց շրջանների «հայոց այրուձիի» տրադիցիաները։ Սակայն նոր միջավայրում, նոր պայմաններում և խաչակիր պետությունների ազդեցության տակ նա ենթարկվել է որոշ փոփոխությունների։

Խաչակիր արշավանքների առաջին շրջանում խաչակիր բանակներում, ի տարբերություն արևմտաեվրոպական բանակների, որտեղ իր սենյորի նկատմամբ հեծյալի ստանձնած վասալական զինվորական ծառայության հիմքում ընկած էր սենյորից ստացած ֆեոդը (Հայաստանում խոստակը)[44] և սենյորից ստացած թոշակը (վերջինս հիմնականում ծանրացած է ճորտ գյուղացիության վրա), վարձատրության հիմնական ձևը հանդիսանում էր պատերազմական ավարի բաժանումը[45]։ Նույնիսկ ավելի ուշ շրջանում Երուսաղեմի թագավորության անկումից հետո 12—13-րդ դդ. սկզբին՝ առաջանում է հողազուրկ ազնվականների մի դասակարգ, որը հետևանք էր մի կողմից նվաճված հողերը մուսուլմանների կողմից վերագրավելու և մյուս կողմից իբրև հետևանք ավատների մանրացման։ Վերջին երևույթի դեմ պայքարում էին Անտիոքի Ասսիզների[46] և Երուսաղեմի Ասսիզների[47] օրենսդիրները։ Սակայն վերջիններս չարդարացրին իրենց և այսպես 12-րդ դարի վերջին Կիլիկիայում և խաչակրաց պետություններում առաջանում է մանր ազնվականության՝ ձիավորների հողազուրկ մի դաս, որի մասին ֆրանսիական «էռնուլ և Բերնարդ գան-

---

40 Նույն տեղում, էջ 82։

41 Նույն տեղում, էջ 87։

42 Նույն տեղում, էջ 82—83։

43 Նույն տեղում։

44 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 116։

45 К. Маркс и Ф. Энгельс, Архив. Т. VI, стр. 166—167, տես նաև R. Grousset, Histoire des Croisades, Paris, 1936. t. I, p. 111.

46 Assises d'Antioche, Trad. L'Alishan, Venise, 1876, p. 21—22.

47 Assises de Jerusalem, Ed. Beugnot, Paris, 1843, p. 35—36.

ձապետի ժամանակագրությունում» ասված է. «Ասպետները, որոնք ժառանգությունից զրկված էին, կամ որոնց երկրները Սարակինոսք գրաված էին և տիկինները, որոնց ամուսինները վախճանված էին և որբ օրիորդներ, գնացին հոն Կիպրոս և Կիևի թագավորը տվավ անոնց առատ երկրներ և չկար մեկն, որ հոն երթար և որուն նա առատ երկրներ չտար»[48]։

Հետևաբար, Կիլիկիայում ևս 12—14-րդ դարերում արտաքին թշնամիների դեմ մղված երկարատև պատերազմից հետո շատ բնական էր, որ առաջանար ազնվականների մի դասակարգ, որի հիմնական զբաղմունքը լիներ ֆեոդալի մոտ զինվորական ծառայություն կատարելը, հույս ունենալով վարձատրվել ռազմական ավարով կամ գերիների փրկագնից ստացած եկամուտներով։ Սմբատ սպարապետը արձանագրելով այդ փաստը գրում է. «Բայց և զյիշվելոյն և զշահերոյն բաժնելն պատեհէ՝ որ գրենք... Եվ ինչ շահ կենա՝ ըղորթն այն է՝ որ զամենն յիրար քշտեն, ու կէսն թաքվորինն է և կէսն այլ իշխանացն՝ ըստ իրենց մարդաթրւին չափոյն ի յիրենց վերայ բաժնեն։ Ապա... բրդեղենն ու բամբակեղենն և պղինձն ու երկաթրն զաւրացն է»[49]։

Փրկագնից ստացված եկամուտները զինվորականների միջև բաժանելու մասին է խոսում հետևյալ վկայությունը. «Յարձակեալ, ապա քաջն Թորոս ի վերայ ժողովոյն հունաց զբազում եսպան և զհոլով Սեաստիոսս գերի տարեալ ի գղեակն. վաճառեաց ընդ ոսկւոյ կայսերն էմմանուելի և գանձն բաշխեաց իւրոց զօրուն»[50]։

Ինչպես Երուսաղեմի թագավորությունում, այնպես էլ Կիլիկիայի հայկական թագավորությունում՝ զինվորական ծառայությունը հիմնականում կատարվել է սինյորից ստացած ֆեոդի և ռոճիկի դիմաց։ Ռոճիկ ստացող ձիավորները Երուսաղեմի թագավորությունում կոչվում էին՝ «Soudoyer»-ներ, այսինքն բառացի՝ ռոճիկ ստացողներ, որոնք ռոճիկ էին ստանում փողով և բնամթերքով՝ գյուղացիներից գանձված բահրայով։ Պահպանվել են վկայություններ soudoyer-ների ստացած ռոճիկի և բահրայի չափի մասին։ Այսպես Ջոն Մարգատ հեծելվոր վասալը, որը վասալական կախման մեջ էր գտնվում Արսուֆի սենյորայից, ստանում էր ռոճիկ դրամով՝ 200 բյուզանդ, և բահրա՝ որոշ քանակությամբ ցորեն, յուղ և այլ մթերքներ, որի դիմաց նա պարտավորվում էր սենյորին ներկայանալ 4 ձիով[51]։

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» և Ներսես Շնորհալու «Թուղթ Ընդհանրական»-ում վկայություններ կան Կիլիկիայի հեծելվորների և զինվորականների ռոճիկ կամ թոշակ ստանալու մասին։ Այսպես, Սմբատը, համեմատելով հոգևոր ֆեոդալների ստացած եկամուտը եկեղեցուց ձիավորների ստացած թոշակին, գրում է. «Վասնզի ամէն եկեղեցական հայնց է հաստատած ի յիր ապրանքն ի սուրբ եկեղեցոյն ծառայութենէն՝ զեդ հեծելվոր որ թրովն իր այնէ զթոշակն»[52]։ Ներսես Շնորհալին «Թուղթ Ընդհանրականի» «Առ իշխանս որ ընդ աշխարհի» բաժնում դիմելով իշխաններին գրում է. «Նաև զին-

[48] «Բազմավեպ», 1913, էջ 288—299։ Chronique d'Ernoul et de Bernard de Tresorier publie par M. L. De Mas Lattries, Paris, 1871.

[49] Смбат Спарапет, Судебник, стр. 11—12.

[50] «Սամվել քահանայի Անեցւոյ հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 216—217։

[51] Rey, Les colonies Franques en Syrie, p. 24.

[52] Смбат Спарапет, Судебник, стр. 21.

վորաց ձերոց և որք ծառայեն ձեզ, զսահմանեալ հոգոն մի պակասեցուցանէք, զի զրկանք մեջ է այն անիրաւութիւնս քանզի որպէս որպէս նորա պարտական են վասն պարգևածն որ ի ձենջ զարիւնս իւրեանց հեղուլ վասն ձեր նոյնպէս և զուք պարտիք զխոստացեալ թոշակսն նոցին հատուցանել անթերի»[53]։

Դիմելով զինվորներին գրում է. «Եւ մի առաւել քան զրամայելն ձեր արնիցէք. ըստ սրբոյ Մկրտչին խրատու այլ թոշակօքն ձեր բավականաշչիք։ Նոյնպէս և զորս քան զսահմանեալ հոգոն ձեր անիրաւաբար և բռնութեամբ յաղքատաց յափշտակէք. կամ ի տէրանց ձերոց ընչից գողանայք. ունիք տալ զվճառն առանց՝ պակասութեան յաւուրն դատաստանի»[54]։

Հոգ բառը ըստ Նոր Հայկազյան բառարանի նշանակում է ոռճիկ, թոշակ։ Հոգ տերմինը հետնադարյան հայերենի մեջ ավելի սովորական և ժողովրդին ավելի հասկանալի բառ էր, քան թոշակը։ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» թոշակ բառի դեմ իբրև բացատրություն լուսանցքի վրա գրված է հոգ[55]։ Մատթեոս Ուռհայեցին մի անգամ օգտագործել է հոգակեր տերմինը[56]։ Սմբատը իր «Դատաստանագրքում» հոգվոր բառը օգտագործում է վարձով աշխատող անձի իմաստով[57]։

Լատիներեն erogatia բառը ծագում է erogo ծախսել, դրամ բաժանել բայից փոխ է առել հունարեն 'ρογς ձևը, որ նշանակում է «ժողովրդին բաշխված դրամ» կամ «զինվորներին վճարված թոշակ՝ տարեթոշակ»։ «Թուղթ Ընդհանրական»-ում Ներսես Շնորհալին հոգ և թոշակ բառերը օգտագործել է փոխարինելով մեկը մյուսին և այդտեղից էլ հոգը նշանակում էր թոշակ, որը տրվում էր զինվորներին և հեծելվորներին զինվորական ծառայության դիմաց։

Պրոֆ. Գ. Միքայելյանը, հիմնվելով «Թուղթ Ընդհանրականի», «Նոյնպէս և զորս քան զսահմանեալ հոգոս, ձեր անիրաւաբար և բռնութեամբ յաղքատաց յափշտակէք» վկայության վրա, հանգել է այն ճիշտ եզրակացության, որ հոգը ռուսական ֆեոդալիզմի «кормление» տերմինին է համապատասխան, և որ դա գյուղական բնակչության կողմից բանակի զինվորներին վճարված պարտադիր հարկերից մեկն էր հանդիսանում[58]։

Հեծելվորները Կիլիկյան Հայաստանում իրավունք ունեին օգտվելու վանքի եկամուտներից այն դեպքում, երբ նրանք գտնվում էին ճանապարհորդության մեջ, անշուշտ, ռազմական արշավանքների ընթացքում։ Աներկբայելի է, որ վանքի եկամուտները ստացվում էին ճորտ գյուղացու կամ առհասարակ կախյալ գյուղացիների աշխատանքով կամ նրանցից գանձված հողային ռենտաներով։ Սմբատն այդ մասին գրում է. «սահմանէ յաւրինացն՝ որ թէ թագաւոր և թէ իշխան և թէ հեծելվոր, որ ի ճանպահ կենայ ու վանք պատահի նա իր հաւն իջնու, չիջնու ի գեղ և վանքն տայ զպէտքն..»[59], այսինքն եթե վանք չպատահի, նրա մասին պետք էր հոգալ գյուղական բնակչությունը։

---

[53] «Թուղթ Ընդհանրական», 1865, էջմիածին, էջ 100։

[54] Նույն տեղում, էջ 105—106։

[55] Բասմաջյան Վ., Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց. Վաղարշապատ, 1880, էջ 82։

[56] Մատթէոսի Ուռհայեցւոյ, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 21։

[57] Смбат Спарапет, Судебник, стр. 17.

[58] Г. Микаелян, История Киликийского Армянского государства, Ереван, 1952, стр. 252.

[59] Смбат Спарапет, Судебник, стр. 51.

Հողի կամ հեծելվորի ստացած թոշակի չափի մասին արաբական պատմիչ Աբու-ֆեդան գրում է, որ հայոց մոտ սովորություն էր ձիավորին տալ ոռճիկ տարեկան 12 ոսկի, իսկ հետևակին 3 ոսկի և որ այդպես էր անում Գոդ Վասիլ իշխանի այրի տիկինը իր ամուսնու մահվանից հետո[60]։

Ֆեոդալական Եվրոպայում 13—14-րդ դդ. երկարատև պատերազմների ժամանակաշրջանում (Հարյուրամյա պատերազմը) ստիպված էին պահել մշտական բանակ, ընդ որում վասալի զինվորական ծառայության նախկին պայմաններն այլևս բավարար չէին։ Վերջինս սենյորից ստացած պարգևական հողի կամ ֆեոդի դիմաց որոշ ժամանակ մնում էր զինվորական ծառայության մեջ։ Այս պայմաններում մանր հողատերերից սկսեցին գանձել ռազմական հարկ, որը Արևմտյան Եվրոպայում կոչվում էր scutage կամ escuage, որը զինվորական պարտույթ էր[61]։ Հայտնի է, որ Կիլիկիան նույնպես, սկսած 13-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1375 թիվը, երբ այն կործանվեց, ստիպված էր պահել մշտական բանակ՝ դիմակալելու համար արտաքին թշնամիների մշտական հարձակումները։ Բացի այդ, որպես մոնղոլների դաշնակից, պարտավորված մասնակցում էր մոնղոլների՝ Սիրիայի և Միջագետքի պարբերաբար կրկնվող ռազմական արշավանքներին։ Ինչպես աղբյուրներն են հաղորդում, Կիլիկիան այդ արշավանքներին մասնակցում էր մշտական բանակով, որի թիվը հասնում էր 62 հազարի, որից 12 հազար հեծելվոր-ձիավորներ, իսկ 50 հազարը հետևակ[62]։ Այդպիսի մշտական բանակ պահելու համար Կիլիկիայի թագավորը և ֆեոդալ իշխանները մանր հողատերերից սկսեցին գանձել servitium ռազմական հարկը[63], որով հեծելվոր լիճ ճորտը պարտավորվում էր ռազմական ծառայություն կատարել և որը նման էր Արևմտյան Եվրոպայի վերոհիշյալ զինվորական պարտույթին։ Թեև այս հարկի մասին անմիջական վկայություններ չկան հայ մատենագրական աղբյուրներում, սակայն մեր կարծիքով Սրմբատի «Դատաստանագրքի» 126-րդ հոդվածի «Նոյնպէս ոչ ձի, ոչ սիլահ», չի կարող դրավ դնել, զի կովոյ և ծառութեան ի պետք է ի պարոնութեանն կարիքն[64] հատվածը, շատ հավանական է, որ վերաբերում է զինվորական հարկին՝ վերևում հիշատակված servitum-ին։

Այսպիսով, Կիլիկիայի հայկական թագավորության գլխավոր ռազմական հենարանը հանդիսանում էին բազմաքանակ հողատեր ազատները՝ ձիավոր-հեծելվորները, որոնք կազմում էին Կիլիկիայի բանակի կորիզը՝ հայոց հեծյալը, որոնք զինվորական ծառայության դիմաց, բացի ֆեոդ-կալվածքից, սենյորից ստանում էին հոդ-ոռճիկը և արշավանքի ժամանակ ձեռք բերված ռազմական ավարի կամ ռազմագերիներից ստացված փրկագնի մի մասը։ Նրանք խաղաղ պայմաններում ապրում էին ֆեոդ-կալվածքներում, պարապում էին երկրագործությամբ՝ շահագործելով կախյալ ճորտ գյուղացիներին։

Բացի վերոհիշյալ ռազմական ծառայությունից, որպես սենյորի վասալներ, ձիավոր ասպետները արևմտաեվրոպական ասպետների նման կատա-

60 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 434։

61 Encyclopedia Britanica, Tome 6, p. 779.

62 Documents Armeniens, Paris, 1906, T. II, p. 170—171. Տե՛ս նույնպես Ղ. Ալիշան, էջ 551։ Tournebizee. Histoire politique et religieuse de L'Armenie, p. 210—212. Վարդան Մեծ, Պատմութիւն տիեզերական, Վենետիկ, 1862, էջ 131—132։

63 V. Langlois. Le trésor des chartes d'Arménie, p. 107.

64 Смбат Спарапет, Судебник, стр. 116.

ռում էին նաև այլ վասալական պարտավորություններ և պաշտոններ։ Նախքան դրան անցնելը, հարկավոր է պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք Կիլիկիայում գոյություն են ունեցել ասպետական կարգեր, իսկ եթե գոյություն չեն ունեցել, ապա ի՞նչ կարգով են հանդես եկել։ Հետաքրքիր է նաև ասպետների օծման կարգը։ Այսպես, մատենադրական արխիվները մի շարք վկայություններ են հաղորդում թագավորի կամ բերդատեր իշխանների որդիներին և նրանց ազատներին ձիավորի կամ ասպետի կոչում շնորհելու ծիսակատարության մասին։ «Ձիավորեցուցանելու» կամ ասպետ ձեռնադրելու ծիսակատարությունները, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Կիլիկիայում, զուգադիպում և կատարվում էիս որևէ մի նշանավոր դեպքի ժամանակ կամ դրա առթիվ։ Այդպիսի դեպքեր էին՝ հաղթանակած ճակատամարտին հաջորդող տոնախմբությունները, ջրօրհնեքի կամ թե թագավորի օծումը, թագաժառանգի ծննդյան կամ մկրտության հանդեսները և այլն։ Թե ինչ արտաքին տեսք և բովանդակություն է ունեցել «ձիավորացուցանելու» ծիսակատարությունը, այդ մասին աղբյուրներում պահպանվել են շատ քիչ տեղեկություններ, որոնցից երևում է, որ Կիլիկիայում «ձիավորացուցանելու» ծիսակատարությունները, ինչպես Եվրոպայում, ընդունել են բարդ ձևեր, որտեղ, ըստ Սելդոնի, կատարվում էին պալատական և եկեղեցական հանդեսներ։ Առաջին դեպքում տոնահանդեսներ էին կատարվում ասպետի ձեռնադրման առթիվ, իսկ եկեղեցականի ժամանակ տեղի էր ունենում զոհաբերություն և հոգևոր պատարագ։ Օրինակ, 1284 թ. Լևոն Դ-ը Աստվածահայտության տոնին «ձիավորեցուցանում» է իր երկու որդիներին՝ Թորոսին և Հեթումին. նրանց թվում «և այլ մանկունք իշխանաց և արք յարքունական և սպասաւորաց յորում հանդիսի ներկա գոլով Յովհաննէս Երզնկացի խոսեցաւ երկար ճառ «Ամենայն ածն որ ընդ իշխանութեամբ» խորագրով»[65]։

Վերևում հիշատակված «մանկունքի» տարիքը չէր անցնում 11-ից 18 տարեկան հասակը, թեև «Անտիոքի Ասսիզներում» ասված է, որ «ձիավորեցուցանելու» հասակը 15 տարին է, սակայն պարոնը կարող էր խախտել այդ տարիքը, եթե ինքը ցանկանար. «Եւ ըղորդ հասակն տասն հինգ տարին է, և ձիաւորութիւն, զի առանց ձիաւորութեան չկա հասակ և սարոն կարէ կանոնիցնել զհասակն չորս հինգ տարի, ընդ ներքո է, քանի ուզենա»[66]։

Կիլիկիայում «ձիավորեցուցանելու» տարիքը հաճախ խախտվում էր։ Այսպես, 1259 թ. ձիավորության աստիճանը ստացող Հեթում Ա-ի որդու՝ Թորոսի տարիքը 20-ից անց էր[67]։ Իսկ 1284 թվին ձիավորության աստիճանը ստացող Լևոն Դ-ի որդի Թորոսը 14 տարեկան էր, Հեթումը՝ 18[68]։

Թեև աղբյուրները քիչ են խոսում «ձիավորեցուցանելու» ծիսակատարությունների բովանդակության մասին, սակայն գովասանքով են խոսում ձիավորների հմուտ ձիավարժության մասին։ Այսպես, Վիլլերբանդտ Օլդենբուրգցին 1211 թվականին Սիսում տեղի ունեցած Ջրօրհնեքի արարողա-ծիսակատարության նկարագրության մեջ գրում է. «իսկ թագաւորն և զօրականք ի դաշտ անդր դիմէին, և պալատակապ երիվարօքն արշավակի վազս առեալ

---

65 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 483—484։

66 Assises d'Antioche. Trad. L'Alishan. 1876, p. 18.

67 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 480—482։

68 Նույն տեղում, էջ 484։

նիզակաջոջ նիզակարեկ խաղ առնէին զինուորականս և զրովանդակ զօրն զայն մեծաւ ցնծութեամբ խրոխացան...»[69]։

Աղբյուրները զովասանքով են խոսում Լևոն Բ-ի ձիավարժության մասին. «...և էր սա (Լևոն Բ.) այր իմաստուն և հանճարեղ ձիավարժ հմուտ և ի զինուորութիւն քաջասիրտ...»[70]։

Ռուբեն Ռայմոնդ թագաժառանգի մասին Սմբատը գրում է. «...պատանի գեղեցկատեսիլ հասակաւ երկայն... ձիավարժ դովէլի, իշխանական ձևով պատկառելի»[71]։

Ձիավարժությամբ զբաղվել են նույնիսկ հոգևորական դասերը, որը Ներսես Շնորհալին իր «Թուղթ Ընդհանրական»-ում «մոլութիւն» է անվանում[72]։

Որ գոյություն է ունեցել գործող «հրահանգ ձիավարժութեան», այդ մասին է խոսում հետևյալ վկայությունը։ Հեթում Ա-ի որդիս գերի է ընկնում մամլուկների ձեռքը։ Նրանց սուլթանը կազմակերպում է տոնահանդես, որին մասնակցում է նաև գերի Լևոնը։ «Այլ և ի ձիրնթացս ասպարիսի ելեալ,— գրում է Սամվել Անեցու շարունակողը,—ընդ Սուլթանին առավելագոյն գտաւ զամենայն զինուորս ի հրահանգս ձիավարժութեան... ազատել ի բանտէ և ի կալանաց»[73]։

Ինչպես վերևում հիշեցինք, թեև մեզ չի հասել «ձիավորեցուցանելու» ծիսակատարության ոչ մի ամբողջական նկարագրություն և ձիավարժության հրահանգ, սակայն գտնվել է 14-րդ դարի մի մատյան, որտեղ նկարագրված է ասպետների զենքի, զրահի, դրոշի և նշանակի մասին։ Մատյանը կրում է «զրահի սանձուց որ և Սլեհնոց և հագուցուց պատերազմականաց և մարտիս յազգս իւրեանց» վերնագիրը։ Մատյանը սկսվում է այսպես. «Կնիք և օրհնութիւն աստուծոյ ամենակարողին հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյն եղիցի ի վերայ յայսմ զրահիցս և հագուցոյս և ի վերայ ականողին զսա, ի յորս առ հայելով արդարութեամբ զդեցցի նախախնամելով քո և ուղղելով Տէր Աստուած մեր։ որպեսզի զրարձողն սորաց պահեսցէ անվնաս և աներկիւղ քաջամարտիկ և արիարար զինագրել և անսայթաք մնալ ամրափակ աջով քո որ կենդանի ես և թագաւորես Աստուած յաւիտեանս յաւիտենից»[74]։

Հայ ձիավորների հագուստի և նշանի մասիս Ղևոնդ Ալիշանը գրում է. «Նշան ձիաւորացս էր խաչ կարմիր՝ զպատկեր սրբոյն Վլասոյ ի միջին ունելով, զգեստ՝ ասուեալ սպիտակ»[75]։

Գերմանացի հեղինակ Շուներեկը կարծում է, որ հայ ձիավորը կրում էր կապույտ հանդերձանք՝ ոսկեղեն խաչով և հայկական այրուձիով[76]։ Մեզ թվում է, որ հայ ձիավորները անպայման ունեցել են իրենց հատուկ զգեստը և նշանը և որ դուցե, այն որոշ չափով նման էր խաչակիր ասպետների հագուստին և նշանին։ Բավականին վկայություններ կան ձիավորների ձևնադրության մասին։ Առաջին հայ ասպետը հիշատակվում է 12-րդ դարի սկզբին. որը Մսիսի

69 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 476։
70 «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», ի Վենետիկ, 1856, էջ 194։
71 «Սմբատ Սպարապետի պատմութիւն», 1856, Փարիզ, էջ 109։
72 «Թուղթ Ընդհանրական», 1865, էջ 52։
73 «Սամուէլ Անեցւոյ Պատմութեան շարունակող», Վաղարշապատ, 1893, էջ 222։
74 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 486։
75 Նույն տեղում։
76 Նույն տեղում։

քաղաքապետ է եղել, սակայն ձիավորեցուցանելու առաջին վկայությունը հանդիպում է 12-րդ դարի երկրորդ կեսին։ Այսպես, Լամբրոնի իշխան Օշինը (1140—1170 թթ.) «ետ մկրտել զՀեթում (Օշինի որդին—Ս. Բ.) և արար ձիավոր և պսակեաց ընդ դուստրն իւր ի մի օր և ուրախացան յոյժ»[77]։

Այս վկայությունը կարևոր է նրանով, որ հերքում է ֆրանսիացի պատմաբան հայագետ Ժակ դը Մորգանի և Ղևոնդ Ալիշանի այն ենթադրությունը, որ մինչև 1193 թ. Լևոն Բ-ի կողմից Անտիոքի իշխանության լճության թոթափումը հայ իշխանները իրավունք չեն ունեցել ձիավորեցուցանել իրենց ավատառու իշխան ասպետներին[78]։

Վերոհիշյալ պատմաբանները գրում են, որ Լևոն Բ-ը բազմաթիվ ազատներին շնորհեց ասպետի կոչում[79]։ Բայց մեզ չհաջողվեց գտնել որևէ վկայություն այդ մասին։ Իհարկե, «ձիավորեցուցանելու» բազմաթիվ վկայություններ կան Լևոն Բ-ի հաջորդների վերաբերյալ։ Այսպես, 1256 թ. Հեթում Ա թագավորը Իկոնիայի սուլթանի դեմ տարած հաղթանակից հետո «բազում աւարաւ դարձաւ աշխարհն իւր և ուրախացաւ ոչ սակաւ աւուրս ի սոյն ամի ՉԷ (1256 թ.) կամեցաւ թագաւորն Հեթում ձիաւորեցուցանել զԱնդրանիկ որդին իւր Լևոն (15 նոյեմբեր 1256 թ.) և յեկն ի մայրաքաղաքն Մսիս և առաքեաց յԱնտիոք և կոչեաց իշխանս և որ ի վանդրէից զամենայն դասս եկեղեցականցն ժողովեաց յառաջիկայ ուրախութեան գործին և ձիաւորեցոյց զնա ի թուականին ՉԵ (1256) յամենայն նոյեմբերի ԺԵ օրն, և ուրախացաւ թագաւորն ուրախութեամբ մեծ հանդերձ հարքն իւրովն և ամենայն զարմիւքն և ժողովովն որ եկեալ էին»[80]։

Հեթում Ա-ը 1264 թվին թոռ ունենալու կապակցությամբ շատերին պարգևում է ձիավորի աստիճան։ «Ի սոյն ամի ՉԺԳ (1264) որ և բազում ի վատթարագոյնից և յանգերագոյն ազգաց նաև ի ներքինեաց ևս փառաց և պատուոյ ձիաւորութեան արժանացան»[81]։

Նույնը կատարվում է Լևոն Բ-ի մկրտության առթիվ. «Եւ յաղագս այսմ ուրախութեան պատճառի զերկոսս որդիսն սպարապետին հայոց Սմբատայ՝ զՀեթում և զՎասիլ մականուն Թաթար ձիաւորեցուցին և այլ բազումս ընդ նոսա...»[82]։

Հեթում Ա-ի հաջորդ՝ Լևոն Գ-ը իր երկու որդիներին՝ Թորոսին և Հեթումին «ձիավորեցուցանելու» առթիվ (որը տեղի է ունենում Աստվածահայտնության տոնին), այդ թվում «ձիավորեցուցանում է» «և այլ մանկունք իշխանաց և արք յարքունական»[83]։

Թեև հետագա շրջանի համար մենք չունենք «ձիավորեցուցանելու» մասին այլ վկայություններ, սակայն այդ սովորությունը մնացել է մինչև թագավորության վախճանը։ Այդ երևում է նրանից, որ 1374 թվին Լևոն Զ թագավորին օծության առթիվ վերջինս «ձիավորեցուցանում» է իր համհարզներից մեկին։

---

77 «Սմբատ Սպարապետի տարեգիրք ի Վենետիկ», 1956, էջ 171։

78 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 466։ Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, էջ 259։

79 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 231։

80 Նույն տեղում, էջ 244։

81 Նույն տեղում, էջ 245։

82 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 405։

83 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 405։

«և ի նմին իսկ յաւուր պատուեաց զինակիր Սոհիէ Դուլկարտ, որ էր եկեալ կուսէ լերանց, արարեալ ասպետ յորով իսկ ձեռամբ և կարգեաց զնա Մարաջախտ թագաւորութեան հայոց»[84]։

Մի շարք վկայություններ հաղորդում են այն մասին, որ ոչ միայն հայ ազնվականները, այլև ֆրանկ-ֆեոդալները ստացել են ձիավորության աստիճան Հեթում Ա-ից, թեև նրանք չէին հանդիսանում վերջինի վասալները[85]։

Վերոհիշյալ վկայություններից երևում է, որ ձիավորի կամ ասպետի կոչումը ստանում են ոչ միայն ազատները, այլև մեծ իշխանները՝ հայրենատեր բերդատերերը, որով ցույց է տալիս, որ Կիլիկիայում գոյություն է ունեցել ասպետության երկու աստիճան։ Առաջին՝ բարձր աստիճանին արժանանում էին խոշոր հողատեր իշխանաց իշխանները, սպարապետներն ու մարշալները։ Երկրորդ աստիճանը ստանում էին այն ձիավոր-լիճ ճորտերը, որոնք «ի հայս ազատ» էին կոչվում։ Վերջիններս, բացի զինվորական ծառայությունից, կատարում էին գործակալական պաշտոններ։ Նրանք հաճախ դառնում էին օտար երկրներում թագավորին ներկայացնող դիվանագետ պատգամավորներ, կամ դեսպաններ։ Այսպես, «իսկ ասպետացն այնոցիկ երկոցունց մեկնեալ ի պապէն չոքան առ արքայն Գաղղիոյ և առ այլոց յիշխանացն Արևմտից խնդրել ի նոցանէ ձերն օգնականութիւն»[86]։ Կամ թե նույն 1343 թվականին «և եղև իբրև լուան նուիրակին զխնդրուածս թագաւորին և զիշխանացն հայոց, ետոյն ողջոյն և դարձ արարին առ պապն և մի ոմն ասպետ ընդ նոսա, պատգամաւորն հայոց սեպուհն, Կոստանդին Կարսիլլի...»[87] կամ թե, 1373 թվին, «և իսկ և իսկ միաձայն խորհուրդով պատգամավորս արձակեսցին ասպետ մի որ կոչէր սեպուհ Լեոն Համոսացի ընդ նմա արս երկուսս ի քաղաքէն Սսոյ և տանուտէր զոմն ի Պրեստրէ առ երիտասարդ արքայն Պետրոս...»[88]։

Որ ասպետները Կիլիկիայի հայկական թագավորության վերջին շրջանում կազմում էին առանձին դաս պալատում և մասնակցում էին երկրի առաջ կանգնած քաղաքական հարցերի լուծմանը, վկայում է նույն պատմիչը, նշելով ասպետներին մյուս դասերից հետո. «Ետ յաւուրս միում գումարել ի ժողով ի դահլիճն արքունական զեպիսկոպոսունս և զվարդապետս աշխարհին զաւագանին և զասպետս և զտիկնայս և ժողովուրդն առհասարակ»[89]։

Ասպետները, որպես թագավորի և առավել խոշոր հողատեր ֆեոդալների վասալներ, որպես օտարվող հողի հետ առնչություն ունեցող մանր հողատերեր և սենյորի գործակալներ, ստորագրում են հողային նվիրատվությունների և այլ շնորհանքների տակ, իբրև վկաներ[90]։ Այդ վավերագրերի մեջ առավել ուշագրավ է այն շնորհագիրը, որ 1271 թվին Սարվանդիքարի տեր Ճոֆրեն շնորհում է Տեվտոնյան օրդենին՝ Սարվանդիքարում մաքսատուն-բաժատուն ունենալու մասին, որտեղ հանդես են գալիս վերևում մեր կողմից դասավորած առաջին աստիճանի ասպետներ։ «Գրեցաւ ի մեծի թուականութեան

[84] «Յովհաննու Դարգելի ժամանակագրութիւն Հայոց», 1891, Ս. Պետերբուրգ. էջ 115, Documents Armeniens, t. II, p. 67.

[85] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 485։

[86] «Յովհաննու Դարգելի, ժամանակագրութիւն», էջ 41—43։

[87] «Յովհաննու Դարգելի, ժամանակագրութիւն», էջ 46—47։

[88] Նույն տեղում, էջ 69։

[89] Նույն տեղում, էջ 167։

[90] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 238-239, V. Langlois. Le Tresor des chartes, p. 143.

հայոց ՉԻ (1271) վկայութեամբ մեծ ազգի իշխանին մեր աղբարն պարոն Սմբատայ և մեծահարգի ձիաւորացն սէր Կոստանդին և սէր Ընազդին և սէր Գոյներին[91]։

Ինչպես հայտնի է 13-րդ դարի վերջում և 14-րդ դարում երկրի ներսում սրվեցին ունիթորների և հակաունիթորների հակամարտությունները, ընդ որում արքունիքում ուժեղացավ պայքարը իշխանության գրավման համար։ Թագավորները հաջորդում էին մեկը մյուսին հաճախ զոհ դառնալով հակառակորդների դավադրությանը։ Այդ շրջանում ուժեղանում էր ասպետների քաղաքական դերն ու նշանակությունը։ Ասպետները, որպես դահի հավակնորդների ռազմական հենարան, մասնակցում են պալատական հեղաշրջումներին։ Այսպես, «ՉՔԵ (1296) Հեթում թագավորն ետ զթագաւորութիւն յիւր զեղբօրն իւրոյ պարոն Թորոսին. ի նոյն ամի դաւ եղեւ իշխանացի Հայոց, որք էին գրլխաւորք պարոն Օշինն Սինջալն, որդի պարոն Սմբաթայ Գունդստաբլին և պարոն Օշինն Բակուրեանց, որ էր սպասալար դարբասին և այլ բազում իշխանք և ձիաւորք»[92]։

Ավելի ուշ 1344 թվին Ունիթորների թեկնածու թագավոր Գվիդոն Լուսինյանի սպանությունից հետո, երբ Կոստանդին 4-րդը ընտրվում է թագավոր, նա որոշում է սպանել Գվիդոնի կնոջը և որդիներին։ Այդ բանը նա հանձնարարում է երկու ասպետներին. «ետ հրամանայ (Կոստանդին 4-րդ) ասպետաց երկուց ազատաց ջրահեղձոյց առնել զտիկինն զայն և զորդիս նորա երկոսին դաղտնաբար»[93]։

Միջնադարյան Եվրոպայի, մասնավորապես Անգլիայի օրինակով, որտեղ խաղաղության ժամանակ արքունիքում, իսկ պատերազմի ժամանակ ռազմի դաշտում սուրհանդակի պաշտոն էին կատարում հերալդները, այստեղ, Կիլիկիայում, արքունիքում նրանք կոչվել են պատգամավորներ[94], որը անգլերեն «հերալդ» բառի թարգմանությունն է։ Նրանք սենյորաների կամ բարոնությունների դղյակում կոչվել են «ավագ չավուշ» և «չավուշ»[95]։ Պատգամավոր-չավուշները կատարում էին պետական կարևոր հաղորդումներ, կարգավորում էին պալատական հանդեսներ[96] և բարոնություններում հրավիրում էին վերին ատյանի նիստեր[97]։

Մենք չկարողացանք որևէ վկայություն գտնել եվրոպական ասպետության մի շարք աստիճանների մասին, ինչպիսիք են, դրոշակակիր ասպետները և նրանց մանկլավիկները։ Սակայն մեզ թվում է, որ Վիլլեբրանդտ Օլդենբուրգցու՝ 1212 թվականի Սսում տեղի ունեցած Ջրօրհնեքի նկարագրության մեջ նշատակված «և դասք դասք ազնվաց երկրի և բազմութիւն զօրականաց վայելչապէս զգեստաւորեալք զորոց՝ արրանեակք նոցին դցելով ի ձեռս զնշանս և զդրոշս և ածելով զերիվարս նոցին պալատականս...»[98], վկայությունը վերաբերում է դրոշակակիր ասպետներին և նրանց մանկլավիկներին։

---

91 «Բազմավէպ», 1873, էջ 119։

92 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրության, 1951, էջ 82։

93 Յովհանու Դարտելի ժամանակագրություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1871, էջ 54։

94 Смбат Спарапет, Судебник, стр. 70.

95 Assises d'Antioche, Trad. L. Alishan, p. 9—10.

96 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 475։

97 Смбат Спарапет, Судебник, стр. 70.

98 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 476։

Այժմ աշխատենք պատասխանել այն հարցին, թե արդյոք գոյություն են ունեցել հայկական ասպետական օրդեններ։ Լատինական և հայկական աղբյուրներին քաջատեղյակ Ղ. Ալիշանը ասում է, որ իրեն չի հաջողվել գտնել վկայություն հայկական ասպետական կարգի մասին։ Սակայն նա ավելացնում է, որ «հեղինակը ոմանք ԺԵ և ԺԸ դարուց՝ ոչ գիտենք յորոց աղբերաց առեալ ասեն և կարգ հայ ասպետաց հաստատեալ ի ժամանակի հաստատութեան Տաճարականացն, այլ զի սոցայս հաստատութիւն եղեալ է յամի 1118 թիվ, Յերուսաղեմ, առ մերովս առաջին պարոն Թորոսին (1129), ոչ կարծեմ ստոյգ. բայց հավանագոյն զոր այլ ասեն՝ ի թագաւորաց մերոց հաստատեալ և ինձ սիրելի էր ասել ի Լևոն Ա (իմա Լևոն Բ) թագաւորէ՞։ Երկու դասք ասել լինել ասպետացն հայոց. մի եկեղեցականաց կամ քահանայից, և միւս աշխարայնոց, երկոցուն և նպատակ գալով բանիւ և գինու պաշտպանել զուղղափառ հաւատս և կրօնաւորիլ կանօնոք Ս. Բարսեղի, պաշտպան ունելով ԶՍ, Վլաս եպիսկոպոս. վասն որոյ և ասպետք Ս. Վլասայ կոչէին, որ և այս ոչ թվի ինձ հավանական մանավանդ զի եղեն և այլ զկարգ Ս. Վլասայ յԱսորիս. այլ ոչ ասեն հայոց սեփական»[99]։

Մեզ թվում է. որ Ղ. Ալիշանի վերոհիշյալ ենթադրությունը ճիշտ է, քանի որ 12—13-րդ դարերում ոչ մի հայ և օտար հեղինակ չեն հիշատակում հայ ասպետական կարգի մասին։ Օրինակ ֆրանսիացի ժամանակագիրներ Էոնուլը, Բեռնարդը, որոնք մանրամասն խոսում են Թորոս Ա իշխանի Երուսաղեմ ուղևորության, հայ ասպետների Կիպրոս տեղափոխվելու և այլ կարևոր անցքերի մասին, հետևաբար նրանք չէին կարող զանց առնել հայ ասպետական կարգի հիմնադրման նման կարևոր մի իրադարձություն, այլև չենք խոսում Սմբատ սպարապետի մասին, որը քաջատեղյակ էր Կիլիկիայի պատմությանը և, անշուշտ, մոտիկից ականատես Կիլիկիայի բոլոր իրադարձություններին։ Մեզ թվում է, որ Կիլիկիայում անհրաժեշտություն չէր զգացվում ասպետական կարգերի հիմնադրմանը, քանի որ ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Կիլիկիայում կազմակերպվել էին թագավորական կամ պետական բանակներ, վերջիններում ստեղծվել էին բանակի միավորումներ գունդստաբլների, մարաջախտների և այլ զինվորական աստիճանավորների հրամանատարության տակ։

Հայտնի է. որ խաչակրաց արշավանքների շրջանում 11—13-րդ դարերում ստեղծվել էին երեք հոգևոր ասպետական օրդեններ, խաչակրաց արշավանքները ոգեշնչող՝ կաթոլիկ եկեղեցին գլխավորող պապականության հովանավորության և անմիջական ղեկավարության տակ։ Դա հնարավոր դարձավ այն պատճառով, որ փաստորեն իր ձեռքն էր վերցրել արևմտաեվրոպական պետությունների քաղաքական ղեկը։ Ուստի հոգևոր ասպետական օրդենների հիմնադրումը հետապնդում էր մի հիմնական նպատակ՝ ուղեկցել և օգնել խաչակիր բանակներին՝ ազատագրելու Տիրոջ սուրբ գերեզմանը և այնուհետև մասնակցել «ազատագրված վայրերի» պաշտպանության և, մյուս կողմից, ուժեղացնել Մերձավոր Արևելքում ստեղծված ֆրանկ պետությունների ներքին և արտաքին դրությունը՝ նվաճելով նոր տերիտորիաներ, ընդլայնելով կաթոլիկ եկեղեցու և նրա հետևում կանգնած անդրծովյան գաղութատերերի առևտրա-

99 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 487։

կան կապիտալի իշխանությունը։ Հայտնի է, որ Կիլիկիայում ոչ մի ժամանակ հայոց եկեղեցին Կիլիկյան հայկական պետության վրա չի ունեցել գերիշխող դիրք, այն ինչ որ բնորոշ էր արևմտաեվրոպական թագավորությունների համար, որտեղ կաթոլիկ եկեղեցին պետություն էր պետության մեջ։ Այդպիսի ասպետական օրդենների կազմակերպման անհրաժեշտություն չէր զգացվում նաև այն պատճառով, որ Կիլիկիայի հայ ձիավոր-ասպետները չէին հետապնդում ուրիշի երկրները զավթելու և կողոպտելու նպատակ, ինչպիսիք էին հոգևոր ասպետական օրդենների նպատակները, այլ հայ ձիավորի նպատակն էր պաշտպանել Կիլիկյան հողում վերականգնված հայ պետականությունը և նրա սահմանները, ապահովել ու պաշտպանել թուրք-սելջուկյան և մոնղոլական արշավանքներից ու բարբարոսություններից մաղապուրծ ազատված հայ զանգվածների կյանքն ու ունեցվածքը։ 14-րդ դարի Կիլիկյան տաղասաց Հովհաննես Թլկուրանցու կողմից հյուսված «Հայ քաջազուն ասպետ, ավագ մարաջախտ և սպարապետ Լիպարիտի մասին» արձակ դյուցազներգությունը ապացույց է Կիլիկիայի հայ ձիավոր-ասպետի հետապնդած վերոհիշյալ վեհ նպատակներին[100]։ Նույն ոգով է ավանդված և տոգորված նաև «Ասպետը և իր ընկերները»[101] ավանդությունը, ինչպես և 13-րդ դարի անանուն հիշատակագրի Սմբատ սպարապետի մահը արձանագրող հիշատակարանը[102]։

---

100 «Հանդէս Ամսօրեայ», 1933, էջ 129—138։
101 «Կոչնակ», 1931, էջ 234—235։
102 «Բազմավէպ», 1876, էջ 318։